

# Արջուտի ոսկու հանքավայրի շահագործման աշխատանքային նախագծի Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերլուծություն

## 1. Ներածություն

Արջուտի ոսկու հանքավայրը գտնվում է ՀՀ Լոռու մարզում՝ Վանաձոր քաղաքից 12.0 կմ հեռավորության վրա դեպի հյուսիս-արևմուտք, Արջուտ գյուղից դեպի հյուսիս-արևմուտք՝ 4.0 կմ, Արջուտ կայարանից դեպի հյուսիս-արևմուտք 5.0 կմ հեռավորության վրա՝ Բագումի լեռնաշղթայի հարավային լանջին, Փամբակ գետի ձախ ափին: Բացհանքի օտարման տարածքը կազմում է 18.7 հա, իսկ լցակույտինը՝ 13.6հա:

Արջուտի ոսկու հանքավայրի շահագործման թույլտվության համար «ԲԱԿՏԵԿ-ԷԿՈ» ՍՊԸ-ն 2014 թվականին ներկայացրել է շահագործման աշխատանքային նախագիծ, որը ներառում է Շրջակա միջավայրի պահպանում բաժինը [1]: Նախագիծը 2014 թ.-ին ներկայացվել է Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

## 2. Շրջակա միջավայրի պահպանում բաժնի նկարագրությունը

Ծրագիրը կազմվել է 2014 թվականին: Շրջակա միջավայրի պահպանում բաժինը բաղկացած է նախաբանից, 3 բաժիններից, ծավալը կազմում է 30 էջ, տես [1]:

## 3. Շրջակա միջավայրի պահպանում բաժնի թերությունները

Ծրագրի 1-ին բաժնում տրված է Շրջակա միջավայրի բնութագիրը: 1.1. Հանքավայրի գտնվելու վայրը և լանդշաֆտը ենթաբաժնում տրված է հանքավայրի տարածքի շատ սեղմ (ընդամենը 1 էջ) ընդհանուր նկարագրությունը: 1.4.-1.6 ենթաբաժիններում ներկայացված են տարածքի հողերը (ընդամենը 2 տող. «Հանքավայրի տարածքը ներկայացված է սևահող, ալրային կարբոնատացված հողերով, որոնք պիտանի չեն գյուղատնտեսական կուլտուրաների աճեցման համար»), կենդանական աշխարհը (ընդամենը 4 տող) և բուսական աշխարհը (ընդամենը 4 տող), երեք ենթաբաժինը միասին (ընդամենը՝ 10 տող):

**Փաստացի, նախագծում շրջակա միջավայրի բաղադրիչների ներկա վիճակի բնութագիր ընդհանրապես ներկայացված չէ:**

Ծրագրի 3.1. Բնապահպանական միջոցառումներ ենթաբաժնում (ընդամենը 1 էջ), թվարկվում է 4 միջոցառում. փոշու նստեցման նպատակով՝ ոռոգում, խոնավացում, խախտված հողերի ռեկուլտիվացիա, վտանգավոր նյութերի արտանետումները նվազեցնելու նպատակով մեքենասարքավորումների վրա չեզոքացուցիչների տեղադրում, բացհանքի արդյունաբերական հրապարակի շրջակայքի կանաչապատում: Միաժամանակ հայտարարվում է, որ ջրերի աղտոտում տեղի չի ունենա: Ծրագրի 3.2 ենթաբաժնում, ընդունված մեթոդով կատարված հաշվարկների հիման վրա, ներկայացված են օդային ավազան արտանետումների կանխատեսվող քանակները:

Ծրագրի 3.4 ենթաբաժնում ներկայացված է լցակույտի մակերևույթի խախտված հողերի ռեկուլտիվացիայի ծախսերի նախահաշիվը: Ծրագրով բացահանքի մշակված տարածության ռեկուլտիվացիան չի նախատեսվում:

**Փաստացի ծրագրում ներկայացված չէ հանքի շահագործման ազդեցությունը շրջակա միջավայրի բաղադրիչների վրա:**

Ծրագրում շրջակա միջավայրի վրա ներգործության գնահատումներ, հաշվարկներ կանխատեսումներ ծրագրում ներկայացված չեն:

Ծրագրում փաստարկված, քանակական տվյալներով հիմնավորված, բնապահպանական և ռեկուլտիվացիոն միջոցառումներ, մոնիտորինային ծրագիր նույնպես ներկայացված չեն:

Վերևում ներկայացված թերությունները հիմնարար են, ցույց են տալիս, որ Արջուտի ոսկու հանքավայրի շահագործման աշխատանքային նախագծի Շրջակա միջավայրի պահպանում բաժինը մասնագիտական տեսանկյունից ծայրահեղ թերի է, որի հետագա քննարկումը աննպատակահարմար է:

Ծրագրի բնապահպանական բաժնում հանրային առողջության, հանքարդյունաբերության ոլորտում շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող միջազգային առաջավոր փորձի, շրջակա միջավայրի պահպանության հարցերով ՀՀ միջազգային պարտավորություններից բխող թեմաներն ընդհանրապես բացակայում են:

Ներկայացված ծրագիրն, ընդհանուր առմամբ, նույնիսկ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի ծավալ, բովանդակություն և պահանջվող հիմնավորվածություն չունի:

#### Ամփոփում/ եզրակացություն

Արջուտի ոսկու հանքավայրի շահագործման ծրագրի «Շրջակա միջավայրի պահպանության» բաժնի վերլուծությունը ցույց է տալիս, որ այն չի համապատասխանում ՀՀ գործող օրենսդրությանը և ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններից բխող պահանջներին:

Անհրաժեշտ է ծրագիրն ամբողջությամբ վերամշակել և կազմել ՀՀ գործող օրենսդրությանն համապատասխան նոր ծրագիր:

#### Հղումներ

1. Արջուտի ոսկու հանքավայրի շահագործման աշխատանքային նախագիծ, 2014:

## Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին

“ԲԱԿՏԵԿ-ԷԿՈ” ՍՊԸ-ն Արջուտի ոսկու հանքավայրի շահագործման թույլտվության համար 2014 թվականին ներկայացրել է շահագործման աշխատանքային նախագիծ, որը ներառում է Շրջակա միջավայրի պահպանում բաժինը: Նախագիծը 2014 թ.-ին ներկայացվել է Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության: «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2014 թվականին տրվել է դրական եզրակացություն (թիվ 58, 06.08.2014):

Որպես փորձաքննական ներկայացված է 4 պահանջ.

1. Գործունեության թույլտվություն ստանալ՝ ներառյալ հողերի գործառնական նշանակության փոփոխությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
2. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փորձաքննության ներկայացնել գործունեության հաջորդ փուլի նախագծային փաստաթղթերը, խախտված տարածքների ռեկուլտիվացիայի նախագծային փաստաթղթերը:
3. Շինարարության և շահագործման ընթացքում առաջացած շինադրի հեռացումը և ջրօգտագործումը իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Գործունեության ընթացքում իրականացվող մոնիտորինգի տվյալները պետք է հասանելի լինեն պետական մարմինների և հասարակության համար:

Ակնհայտ է, որ նշված 4 պահանջները փորձաքննական չեն, այլ գործող օրենսդրության պահանջներն են, որոնք ևս մեկ անգամ հիշեցնելու կամ հնչեցնելու համար հատուկ ստեղծված ՊՈԱԿ-ի, փորձաքննական եզրակացություն ստանալու բյուրոկրատական տևական գործընթացի, վերոնշված «փորձաքննական» պահանջներով փորձաքննության անհրաժեշտություն չկա: Այն հանգամանքը, որ “ԲԱԿՏԵԿ-ԷԿՈ” ՍՊԸ-ի ներկայացրած ծրագրի բնապահպանական մասում ջրօգտագործում և շրջակա միջավայրի մոնիտորինգ նախատեսված չէ, փորձաքննության եզրակացության վրա չի ազդել և նույնիսկ չի դարձել պահանջ:

Փաստացի փորձաքննություն որպես այդպիսին չի իրականացվել, լրացուցիչ հետազոտություններ ու գնահատումներ, ներկայացված գնահատականների ու կանխատեսումների վերլուծություններ, ստուգիչ վերահաշվարկներ չեն իրականացվել: Նշված գործողությունների կատարման պահանջ “ԲԱԿՏԵԿ-ԷԿՈ” ՍՊԸ-ին նույնպես փաստացի չի ներկայացվել: Փորձաքննական եզրակացությունը (դրական) տրվել է ֆորմալ մոտեցմամբ, դեկլարատիվ բնույթի շաբլոնային ձևակերպումներով:

*19.10.2016*

Սեյրան Մինասյան